



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՐԻՄԱՍԵՐՆԻ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



*ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՈՒՄԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ*

**«ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՈՐԻՆԱԿՈՎ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ԲԱԼԵՆՔ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴՈՅՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՊՐԻՆՔ»**

*ՊԱՏԳԱՄԵՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ*

Կիրակի, 5 Նոյեմբերի առաւօտուն, Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ կամարներէն Հայ հոգիներուն մէջ կը տարածուէր Հայոց հաւատքի ծնունդ շարականները: Հիմա Տէրն է, որ շրթունքները կը բաւարար, բերանները՝ իրեն օրհնութիւնը երգելու, բարբառելու՝ «Չարթի՛ր, Տէ՛ր, ընդէ՛ր ննջես...»: Իսկ արեւուն հետ ծիրակի հոգիներէն դուրս կը ժայթքէր «Առաւօտ Լուսոյ»ն, «Փառք ի Բարձունս Աստուծոյ»ն եւ «Սուրբ Աստուած»ը:

«Հրաշափառ»ի երգին մէջէն կ'անցնէր թափօրը Ս. Պատարագի:

Հանդիսաւոր Ս. եւ Ամահ Պատարագը կը մատուցէր Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, իսկ Ս. Սեղանին կը սպասարկէին Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկիմեան եւ Արժ. Տ. Ռազմիկ Բիւյ. Խաչատուրեան: Ներկայ էր նաեւ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Հաւատացեալներու բազմութիւնը երկիւղածութեամբ կ'ունկնդրէր ու կը մասնակցէր Ս. Պատարագի երգեցողութեան: Երգեցողութիւնը կը կատարուէր եկեղեցւոյս սարկաւազաց ու դպրաց դասերուն, ինչպէս նաեւ Կիրակնօրեայ Վարժարանի պատանիներուն կողմէ:

Պահը հոգեթով էր եւ մթնոլորտը՝ աղօթարար: Երկիւղած խոնարհումով մարդիկ թափօրի խաչը կը համբուրէին, ծնողները իրենց զաւակները կ'առաջնորդէին Պատարագիչ Սրբազան Հօր ձեռքի խաչը համբուրելու: Եկեղեցին արդէն մէկ մարմին էր եղած եւ Սրբութեան ողջոյնն ու համբոյրը ալիքի նման հիմա կը տարածուէր եկեղեցւոյ ամբողջ երկայնքին: Հրեշտակներն ալ ներկայ էին իրենց »Սուրբ, Սուրբ«երով, իսկ «Պռօսիսումէ», ուշադի՛ր եղէք, Զրիստոս կու գայ ահա պատարագուելու եւ իր նոր ուխտը կը կնքէր մարդոց հետ՝ իր մարմինն ու կենարար արիւնը տալով բոլորին:

Քարոզի պահն է: Առաջնորդ Սրբազանը փառք եւ գոհութիւն կը յայտնէ Աստուծոյ, որ կը գտնուի Հովիտի Հայ համայնքին հետ եւ միասնաբար անոնց հետ կը նշէ եկեղեցւոյ հիմնադրութեան 43րդ տարեդարձը: «Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 4 Նոյեմբերը Ամենայն Սրբոց տօնն էր, եւ քանի որ սուրբերը նաեւ նահատակներ են եղած, կենդանի

Նահատակներ, եւ քանի որ այս եկեղեցին կնքուած է Սրբոց Նահատակաց անունով, արդ՝ այսօր անուանակոչութեան տօնն է եկեղեցւոյս: Եւ իբրեւ մէկ Յօր որդիներու, այս Ս. եկեղեցին եկած ենք մեր հաւատքի ուխտը վերանորոգելու», ըսաւ Առաջնորդ Սրբազան Հայրը: Սուրբերը իրենց հաւատքին համար նահատակուած են, իրենց արիւնով վկայած են եւ իրենց կեանքերը նուիրաբերած՝ պաշտպանելու Քրիստոսի անունը: Անոնք անձնագոհ վկաներ են Քրիստոսի եւ իրենց թափած արիւնով եւ ունեցած ժայռանման հաւատքով հաստատած են Քրիստոսի Ս. եկեղեցին: Տակաւին, անոնք զԱստուած սիրեցին իրենց ամբողջ մտքով, սրտով, հոգիով, ամբողջ էութեամբ եւ զօրութեամբ, եւ նոյնպէս՝ սիրեցին իրենց նմանները: Անոնք եղան Քրիստոսի անունին համար բազմաչարչար վկաներ, խոստովանողներ, եւ իրենց հաւատքին մէջ մնացին անխախտ ու անսասան, չշեղեցան իրենց առաքելութեան ճամբէն, այլ հաստատ քալեցին ճշմարիտ ճամբէն եւ մեզի ալ կտակեցին քալել նոյն ճամբէն: Ուստի, մե՛նք ալ պէտք է քալենք այն ճամբէն՝ որ իրենցը եղաւ, պէտք է անոնց նման Աստուծոյ հետ քալենք, Աստուծորդւոյն պատուիրաններուն հաւատարմութեան մէջ ապրինք, եւ իրենց մեզի թողած աւանդը պէտք է մեր մէջ միշտ վառ պահենք: Այսօր ուխտի օր է, հաւատքի ու յանձնառութեան խորացման օր: Դժուարութիւններ, փորձութիւններ ու հակառակութիւններ կան ու պիտի ըլլան, սակայն անոնք պէտք չէ շփոթի մատնեն մեզ, այլ մեր հայեացքը պէտք է միշտ ուղղենք Քրիստոսի, անշեղ մնալով մեր հաւատքին ու համոզումներուն մէջ, որոնք մեզի կտակուած են մեր հայրերէն, որպէսզի կարենանք բարիով յաղթել չարին, պատգամեց Սրբազանը: Ապա Սրբազան Հայրը օրհնեց յիշատակը բոլոր անոնց, որոնք հաւատքով հիմը դրին այս եկեղեցւոյ, նաեւ բոլոր նախկին սպասարկուներուն՝ որոնք գործեցին ու անցան: Եւ աղօթք բարձրացուց եկեղեցւոյս այսօրուան սպասարկուներուն համար, որպէսզի Աստուած անոնց քայլերը առաջնորդէ, զիրենք փրկէ երեւելի ու աներեւոյթ ամէն տեսակի փորձութիւններէ, եւ զիրենք իրենց ծառայական ուխտին մէջ միշտ անխախտ պահէ:

Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, թափօրը առաջնորդուեցաւ «Աւետիսեան» սրահ, ուր եկեղեցւոյս Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած էր մատաղը: Կատարուեցաւ մատաղօրհներ:

Սրբազան Հայրը օրհնեց եւ բարձր գնահատեց Տիկնանց Միութեան եւ Հոգաբարձութեան անդամներուն մատուցած ծառայութիւնը, ինչպէս նաեւ մատաղին իրենց նիւթաբարոյական օժանդակութիւն բերած բոլոր հաւատացեալները:

Աւարտին՝ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով եւ «Կիլիկիա» ու «Մեր Հայրենիք» մաղթերգներու կատարումով վերջ գտաւ հոգեպարար արարողութիւնը, որմէ ետք հաւատացեալները կարգով մօտեցան եւ վերցուցին մատաղի իրենց հրամցուած բաժինը եւ հոգեկորոզ ուրախութեամբ վերադարձան իրենց տունները:

Յայտնենք, որ օր մը առաջ, Շաբաթ, 3 Նոյեմբերի երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը հովանաւորեց եւ իր ներկայութեամբ պատուեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմակերպաւ ձեռնարկը, եւ գնահատանքի ու օրհնութեան խօսքը ուղղեց ներկաներուն:

*DURING HOLY MASS ON THE NAME DAY OF HOLY MARTYRS CHURCH*

**“LET US FOLLOW THE PATH OF OUR SAINTS AND MARTYRS AND LIVE  
ACCORDING TO THE COMMANDMENTS  
OF OUR LORD”**

***DECLARED THE PRELATE***

On Sunday, November 5, 2006, the Holy Martyrs Church of Encino celebrated its name day and 43<sup>rd</sup> anniversary, with a special Holy Mass that was conducted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Razmig Khatchadourian assisted at the altar. H.E. Archbishop Yeprem Tabakian also participated in the Mass, along with the parish deacons, choir, and Sunday School students.

At the start of his sermon, the Prelate gave thanks to God for granting him the opportunity to celebrate the 43<sup>rd</sup> anniversary of the founding of the church with the parish community. Being that Saturday, November 4, was All Saints Day according to our church calendar, and because our saints were also martyrs, the name day of Holy Martyrs Church was also celebrated on this day. He reminded the faithful that the saints were martyred for their faith, the blood they shed became a testament of their faith, and it was this unyielding faith that established our church. They remained resolute in their faith and never strayed from their righteous path and mission, and it is our duty to follow in their path and to live according to the principles set forth by our Lord. There are many difficulties and temptations in life; however, we must remain loyal to the faith and convictions bequeathed to us by our forefathers so that we may conquer evil. The Prelate then blessed the memories of all those who contributed to the founding of Holy Martyrs Church and all the past servants, then beseeched the Lord to guide the path of the current servants of the church.

Following Holy Mass, the Prelate headed to Avedissian Hall in a procession, where he blessed the madagh that was prepared by the parish Ladies Auxiliary. The Prelate then commended the Ladies Auxiliary and Board of Trustees, after which the service came to a close with the Prelate's "Bahbanich" prayer and the collective singing of "Giligia" and "Mer Hayrenik".